Որոշ էջեր մի քանի անգամ կարդացի եւ ունեցա ուրախ մի ապրում, որ Դուք ոչ ոքի նման չեք, մտածում եք պարզ, չեք կաշկանդում Ձեզ եւ ինչ էլ որ գրում եք, միշտ հարազատ մնալով Ձեր ասելիքին, քան չափածոյի դարեր ի վեր ընդունված կարգ ու կանոնին։

Ռուբեն ԶԱՐՅԱՆ 30 հունիսի, 1980 Երեւան

Ինչպես մեր հանդիպման ժամանակ ասացի, գիրքդ հավանել էի, հավանել էի իր բնակա-նության, պարզության ու ջերմության համար։ Եվ, ճիշտն ասած, քեզ տեսնելուց հետո գիրքդ առավել հավանեցի... Գիտե՞ս ինչու... Դու եւ գիրքդ շատ նման էիք իրար, երկուսդ էլ՝ պայ-ծառ, բնական...

Չգիտեմ, քո ցուլքն ընկավ գրքիդ վրա, թե՝ հակառակը, բայց դուք երկուսդ իմ մեջ միա-ցաք ու ամբողջացաք։ Գիտե՞ս, ինչ մեծ բան է, երբ մարդ նման է իր գրածին, ճշանակում է չի ստում, ճշանակում է կեցվածք չի ընդո-նում։ Իսկ սուռն ու կեցվածքը պոեզիայի ոխե-րիմներն են... Գագիկ ջաճ, ես քեզ շատ, շատ հավանեցի։ Քեզանից լույս էր ճառագայթում, նաեւ՝ համեստություն, նաեւ՝ բարոություն... Եթե Երեւանում լինեիր, թեւ մեր տարիքների տարբերությանը, մենք ընկերներ կլինեինք...

Վահագն ԴՎԹՅԱՆ 11 մայիս, 81, Երեւան

Դու նման ես քո բանաստեղծություննե-րին, ապրում ես այնպես, ինչպես գրում ես։ Եվ երեւի այդ մերդաշնակությունն է պատճա-ռը, որ քեզ այդքան շատ են սիրում քո Դավան քաղաքում։ Ես վկա եմ, թե ինչպես են ընդո-նում քո բանաստեղծությունները։ Մենք միա-սին հասել ենք մինչեւ Օրենբուրգ, եւ գիտեմ, որ դժվար է քեզ չսիրել որպես հայ բանաս-տեղծի։ Բայց այն, ինչ կատարվեց քո հայրենի քաղաքում, երբեք չեմ մոռանա։ Վեց հարյուր տեղամոց լեփ լեցուն դահլիճը փոթորկվում էր ծափերից, երբ կարդացիր «Մենախոսություն» սիրային քնքուշ բանաստեղծությունների շար-քը։ Թեւեւ ասում են, որ առաքյալը իր թաղում պատիվ չունի, բայց քո քաղաքում քեզ սիրում են ու շատ են սիրում, չնայած քո դժվար աշխա-տանքի բերումով շատերի հետ ես չփվում եւ, բնականաբար, բոլորը չէ, որ գոհ են հեռանում, բայց քեզ սիրում են ու հպարտանում քեզնով։ Ասել է՝ սիրում են ճշմարիտ պոեզիան, որը քոնն է ու մեր բոլորինը նաեւ։

Մերութան ՏԵՐ - ԳՈՒԼՆՅԱՆ 14 հուլիսի,1985, Երեւան

Չգիտեմ, թե շնորհալի բանաստեղծ Գագիկ Դավթյանն ինչպե՞ս է ուսանում պոլիտեխնի-կական ինստիտուտում, բայց բանաստեղծու-թյան «ինստիտուտում» նա լավ է ուսանում։ Անձամբ ես հետեւում եմ նրա ստորագրու-թյամբ լույս տեսնող բանաստեղծություններին (նույնիսկ թարգմանություններին) եւ պարզ նկատում եմ նրա աճը։

Նա, որ բոլորովին զերծ է հավուրպատ-շաճության ցավից (ինչպես իր սերնդակից-ների մեծագույն մասը), միաժամանակ չուճ այն բովանդակազերծությունը, այն (թող թույլ տրվի ասելու) «ոչ մի բան չասել» - ությունը, որից տառապում են իր սերնդակիցներից շա-տերը՝ երեւի մոռանալով, որ լոկ մի՝ մղումով է մարդը խոսում՝ բան ասելու նպատակով, իսկ եթե գրում է՝ առավել եւս։ Չէ՞ որ բանաստեղ-ծի գործը, վերջիվերջո, նման է հեռագիր կամ նամակ գրելուն, այն տարբերությամբ, որ սրա հասցեստերը ինչ-որ մի անհատ չէ, այլ մտե-րիմների բազմահազար մի բազմություն։

Այսպես է կյանքում։

Գրականության մեջ էլ կա՛մ այսպես պիտի լինի, կամ ոչինչ էլ չպիտի լինի (եւ չի՛ լինելու)։ Գ.Դավթյանի մեջ, ահա՛, ինձ դուր է գալիս նրա այն ձգտումը, որ ուզում է բան ասել, եւ ասել այնպես, որ բան հասկացվի...

...Ուզում եմ խոսքս ավարտել՝ «Գարուն»-ի ընթերցողներին դիմելով։

- Եկեք հիշենք Գագիկ Դավթյան անուն-ազգանունը (այսինքն՝ կարդանք նրա գրածները) եւ դրանով իսկ շնորհալի երիտասարդին ստիպենք արդարացնելու իմ եւ ձեր հույսերը...

Պարույր ՍԵՎԱԿ «Գարուն» 1970, N 5

Երևանի քաղաքապետարանը, որը 1920-ական թվականներին կառուցվել է Երևանի քաղաքապետ Գևորգ Գևորգյանի կողմից:

Երևանի քաղաքապետարանը, որը 1920-ական թվականներին կառուցվել է Երևանի քաղաքապետ Գևորգ Գևորգյանի կողմից:

à00° ð0Û° ð

Մարին ԿԱԴԻԵՎ
Բուլղարիայի անկախ գրողների միության նախագահ, ակադեմիկոս

Հարգելի Գագիկ Տիգրանի, Որպես Եվրոպայի ամենահայտնի բա-նաստեղծներից մեկը, Դուք անդամակցում եք Աշխարհի բանաստեղծների շարժմանը (Movimiento poetas del mundo), ինչպես նաեւ Բուլղարիայի անկախ գրողների միության եւ Վրաստանի գրողների ստեղծագործական միության պատվավոր անդամ եք։ Ձեր հիա-նալի ստեղծագործությունները թարգմանված են շատ լեզուներով, այդ թվում՝ բուլղարերեն։ Դուք նաեւ հմուտ եւ բեղմնավոր թարգմանիչ եք, եվրոպական եւ միջազգային մրցանակնե-րի դափնեկիր։

Ի սրտե ցանկանում եմք Ձեզ հետագա նվաճումներ, հիանալի նոր գրքեր, մեծ պար-գեւներ, իսկ ամենից առաջ՝ առողջություն եւ երկար կյանք։

Մենք չենք կասկածում, որ Ձեր բանաստեղ-ծական բացառիկ տաղանդը, գրական վարպե-տությունը եւ հարուստ կենսափորձը այսուհետ եւս կնպաստեն Ձեր ամենահամարձակ ծրագ-րերի եւ ձեռնարկումների իրականացմանը։

Երջանկություն, ամենայն բարիք եւ հաջո-ղություններ Ձեզ։ ■

Էդգար ՂԱԶԱՐՅԱՆ

Լեհաստանի Հանրապետությունում Հայաս-տանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան

Երևանի քաղաքապետարանը, որը 1920-ական թվականներին կառուցվել է Երևանի քաղաքապետ Գևորգ Գևորգյանի կողմից:

Հարգարժան պարոն Դավթյան, Սրտանց շնորհավորում եմ Ձեզ` ծննդյան 70-ամյա եւ գրական գործունեության 50-ա-մյա հարուստ եւ գեղեցիկ իռքելյանների առ-թիվ։ Ձեր խորն իմաստնությամբ եւ հուզական ապրումներով բազմաբովանդակ կյանքի եւ ստեղծագործական գործունեության ընթաց-քում Դուք բանաստեղծությունների միջոցով մեզ հետ կիսվել եք Ձեր յուրօրինակ ապրում-ներով ու մտքերով, հարստացրել ժամանակա-կից հայ գրականության ոսկե դարանը՝ միա-ժամանակ նպաստել ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդմանը։

Շնորհակալության եւ գնահատանքի են արժանի Ձեր այն բոլոր ազնիվ ձեռնարկումնե-րը, որոնց արդյունքում, մասնավորապես, հայ եւ լեի ընթերցողներին փոխարարծաբար հա-սու են դարձել միմյանց գրական արժեքներն ու ժառանգությունը։

Մարդկային ազնիվ ու բարի կերպարով Դուք կարողանում եք նաեւ օտարներին ներ-կայացնել հայի լավ տեսակը։ Ինձ համար մեծագույն հպարտություն էր տեսնել Լեհաս-տանի գրական շրջանակներում Ձեր հանդեպ ցուցաբերվող նկատելի հարգանքն ու սերը, որի հիմքում Սյունյաց անզուգական բնաշ-խարհից Ձեզ փոխանցված ստեղծագործա-կան տաղանդն է եւ այն համեստորեն կրելու Ձեր մարդկային շնորհը։

Մարթուն եմ Ձեզ քաջ առողջություն, որ-պեսզի երկար տարիների Ձեր կուտակած գիտելիքների, փորձառության եւ ստեղծա-գործական մտորումների հարուստ հիմքի վրա բազմապատիկ անգամ ավելացնեք այն արժե-քավորը, ինչը Դուք ստեղծում եք մեզ եւ մեր սերունդների համար։ ■

Եժի Մարեկ ՆՈՎԱԿՈՎՍԿԻ

Հայաստանի Հանրապետությունում Լեհաս-տանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան

Երևանի քաղաքապետարանը, որը 1920-ական թվականներին կառուցվել է Երևանի քաղաքապետ Գևորգ Գևորգյանի կողմից:

Պոեզիան բառերի գեղեցիկ համադրության եւ աշխարհի շուրջ մետաֆիզիկական խոհերի արվեստ չէ։ Այն ազգային ինքնագիտակցու-թյան կրող է, հույսի եւ ոգեշնչման աղբյուր, որը հայրենասիրական եւ քաղաքացիական կեցվածք է ձևավորում։ Ձեր պոեզիան, հար-գելի Գագիկ Դավթյան, լի է հայրենասիրության ոգով, թափով, կարոտով, ինչպես նաեւ հույ-սով եւ երազով։

Ձեր թարգմանությունները ընթերցողին զարմացնում են բնագրին հավատարմությամբ եւ ճշգրտությամբ։ Հպարտությամբ եմ նշում, որ Ձեր նախածեռնությամբ «Որպես ձեռք-սեղմում» լեհական պոեզիայի անթղոզիայի ստեղծումն ու հրատարակումը լուրջ նպաստ է մեր երկու ժողովուրդների հոգեւոր մերձեցման

Շուշան Պետրոսյան. «Կապված եմ, ինչ- որ ձեռով կապված եմ մեր նահապետի զինվորների ընտանիքների հետ»

ՀՀ վաստակավոր երգչուհի, ԱԺ պարգևատրված Շուշան Պետրոսյանն Արցախի մեկնելու ճանապարհին մայիսի 6-ին կանգ է առել Շինուհայրում, մասնակցել դպրոցի երկու դասասենյակի անվանակոչման արարողությանը, խոսք ասել զոհերի հիշատակին ու երգել: Որքան էլ սուղ լինեք ժամանակը, փրկարարի անձրեւն էլ թույլ չգրար, առիթը բարեհարմար էր՝ մի քանի հարց հղելու երգչուհուն, ինչին նա սիրով պատասխանեց:

Ձգայուն, փխրուն, պարզ ու անմիջական մարդ է՝ արտաքուստ կոշտ ու կոպիտ զինվորական համազգեստի մեջ: Պարզ լուր և հարաբերություններ կրում, զինվորի պես:

- Սիրելի Շուշան, նախ ասե՞ք, որ ուրախ եք Ձեզ տեսնելու մեզ մոտ, առավելապես՝ այստեղ, Շինուհայրում անցկացված տոնական այս միջոցառմանը:

- Ես նույնպես շատ ուրախ եմ, որ այստեղ եմ գտնվում: Պատիվ է Մյուսինյան, այսօր կողքին լինելը: Քանի որ այսօր կողքին արդեն իսկ մեծ պատիվ է, ասեմ, որ ես էլ իմ արմատներով կիսով չափ այսօր եմ: Կապանցի Սմբատ Բեկը՝ Մելիք-Ստեփանյան, տատիս քեռին է: Ես ինքս էլ կապանցի Շուշան Մելիք-Ստեփանյանի ծոռն եմ:

- Մեր այս հանդիպման նախօրյակին Ձեր կյանքում տեղի ունեցավ մի իրադարձություն, որի կողքով չենք կարող անտարբեր անցնել. Դուք երկրորդ անգամ ստացաք ԱԺ պարգևատրվորի մանդատ: Թույլ տվե՞ք շնորհավորել Ձեզ՝ հանրապետության խորհրդարանի պատգամավոր ընտրվելու առթիվ:

Ճիշտն ասած, երբ առաջին անգամ Դուք եւ արվեստի մի շարք գործիչներ գնացիք խորհրդարան, մենք կարծես թե չէինք կարողանում հաշտվել այդ մտքի հետ:

- Այո, գիտեմ: (Ժպտում է):

- Բայց այսօր դահլիճում լսելով Ձեր խոսքը, երգի կատարումը, համոզվեցինք, թե որքան ճիշտ է արվեստի մարդկանց ներկայությունը խորհրդարանում:

Ըստ էության, պատգամավորի ամենամեծ առաքելությունը ժողովրդի մեջ լինելն է, անմիջական խոսքով ու գործով (նաեւ երգով) երկրին ծառայելը:

Այսօր դա ակնհայտ էր, որի համար մեր գոհությունն ենք արտահայտում:

- Ընդհանրապես եմ:
- Հավանաբար Ձեզ կարելի է համարել հզոր մարդ: Ձե՞ որ այնքան էլ հեշտ չէ դիմանալ երեւանյան տարաբնույթ, տարանպատակ, հաճախ էլ լրագրության հետ կապ չունեցող ՋԼՄ-ների քննադատություններին, եւ կարելու չէ՝ որքանով են դրանք լրագրական էթիկայի ու ճշմարտության սահմաններում:

Ինչպե՞ս եք դիմանում այդպիսի գրոհներին՝ իբրեւ պատգամավոր-երգչուհի:

(Մենք ծիծաղում ենք, Շուշանը տխրում է):

- Գիտե՞ք՝ ինչու եմ դիմանում. ես երկիրս եմ սիրում, ես ժամանակ չունեմ չարամալու, չարությանը չարությանը պատասխանելու: Գիտե՞ք՝ ոնց եմ սիրում երկիրս... գիտե՞ք, ոնց եմ փլվում նրա ամեն զոհի, ամեն ցավի ու հոգսի հետ... (Երգչուհին հուզվում է...):

- Գիտե՞ք, տեսա՞ք Ձեր հուզմունքը... Դահլիճն էլ հուզվեց, գոտեպնդվեց Ձեր խոսքից, երգից...

- Ես ապրիլը չեմ կարողանում տանել... Ապրիլյան ցավը... որը դեռ շարունակվում է...

- Ազգի մասշտաբով հաճախ վիճում, բանավիճում ենք տեքստմեղեդի թեմայով: Այսօր այնքան ճիշտ էր ընտրված երգը՝ իր տեքստով ու մեղեդայնությամբ, ոչ մի ավելորդ բառ չկար:

Կարո՞ղ եք երգի ծննդի մասին պատմել:

- Երգը, որ կոչվում է «Արցախի հողում», գրված է Ավետ Բարսեղյանի խոսքերով եւ Արման Ղազարյանի երաժշտությամբ:

Ասեմ, որ երգն ինձ եմ նվիրել, Ավետը բանաստեղծությունը գրել է ինձ է նվիրել: Նա գիտեր, որ մշակութային ծրագրերով աշխատում եմ Արցախի սահմանամերձ շրջաններում, մասնավորապես՝ Մարտակերտում, արդեն հինգ տարի է:

Առաջին փորձս սկսվեց այն բանից հետո, երբ Շանթն ինձ եւ մարտական փայլուն ուղի անցած ընկերներիս հրավիրեց դիտելու «Նժդեհ» ֆիլմի պրեմիերան: Ամեն ինչ այդ ֆիլմով սկսվեց, արդեն պատգամավոր էի, մարտ ամիսն էր: Չասեմ՝ ով, մեկն ասաց՝ «Ուզում եմ՝ խոխերքս էլ յեշեն ես կիմոն»: Տարախ խոխերքս էլ, հավաքեցի ֆիլմի ողջ խումբը: Մի խոսքով, «Նժդեհը» հիմք հանդիսացավ Արցախի սահմանամերձ շրջաններում՝ մշակութային գործունեությունս սկսելու: Մարտակերտում կլինի նոր մշակույթի տուն: Միայն երգելը չէ... Շատ մշակութային, կրթական գործեր են արվել եւ արվում...

Ահա ե՛ւ՝ Ավետը տեսավ տարիներ շարունակ սահմաններում իմ աշխատելը... Դա Մարտակերտն է, Հաթերքն է, Մարտունիքն է, Թալիշն է, Մատաղիսն է, Տոնաշենն է, «Եղնիկներն» է... Կոնկրետ գործ էի անում, մշակութային, մանկավարժական աջակցություններ՝ մանկավարժներին, դպրոցներին եւ այլն:

Որից հետո ապրիլը եղավ... Այնպես չէ, որ ապրիլից առաջ պատերազմ չկար: Ես անընդհատ քնուն-արթնանում էի այդ պայթող ականների ծայրի տակ: Մարտակերտում, որտեղ մնում էի, ընդամենը չորս կիլոմետր էր բաժանում թշնամու սահմանից:



տերազմ չկար: Ես անընդհատ քնուն-արթնանում էի այդ պայթող ականների ծայրի տակ: Մարտակերտում, որտեղ մնում էի, ընդամենը չորս կիլոմետր էր բաժանում թշնամու սահմանից:

Նորից անցնեմ երգին. այն ծնվել է 2016-ի հունվար ամսին, այսինքն, դեռ ապրիլը չէր եղել, ես շարունակում էի սահմաններում աշխատանքս, շարունակում էի չտարբերել երկուսին... Իմ Արցախն ու Հայաստանն ապրում էին իմ աղոթքներում... Ավետը գրել էր ինձ համար, որովհետեւ ես այդպես ապրում եմ, եւ դա Ավետը գիտեր... Հետո գրվեց երաժշտությունը:

Երգն առաջին անգամ կատարեցի բանակի օրը՝ 2016-ի հունվարի 28-ին... Դե, առաջին անգամ երգն այդպես չի հիշվում: Երկրորդ անգամ երգեցի Կրեմլում եւ չգիտեի, որ ուղիղ մեկ ամիս հետո պետք է ապրիլյան պատերազմը սկսվեր...

- 2016 թվականի հոկտեմբերին «Այունյաց երկիր» թերթի ստեղծագործական անձնակազմը Թալիշում էր: Գյուղապետն ասաց...

- Վիլիկը...

- Բոլորին ճանաչում եք, կեցցեք: Վիլիկն ասաց, որ մի քանի օր առաջ այստեղ էր Շուշան Պետրոսյանը: Իսկ այս տարվա փետրվարի 20-ին՝ սահմանադրական հանրաքվեի օրը, մեր թերթին հրավիրել էին Լեռնային Ղարաբաղ: Ստեփանակերտում, երբ մտանք մի ընտրական տեղամաս, հանձնաժողովի նախագահն ասաց, որ Շուշան Պետրոսյանը հենց նոր դուրս եկավ...

(Ծիծաղում ենք):

Գիտե՞ք՝ ինչն է հետաքրքիր. Դուք երեւի մեր այն քիչ արվեստագետներից եք, ով առաջին գծում է: Ինչո՞վ է պայմանավորված Ձեր այդ պահվածքը, կարծես հատուկ առաքելություն եք իրականացնում, որն ընդօրինակման արժանի է մյուս բոլոր պատգամավորների, մշակութային գործիչների համար:

Դա սրտի մղո՞ւմ է, թե՞ Ձեր արվեստի դերն այդտեղ եք տեսնում...

- Ի՞նչ ասեմ... Ուղղակի չեմ կարող այդ մասին խոսել... Դա ինձ համար այնպես է, ինչպես, որ պատմեմ, թե ջուրն ինչու եմ խմում... Ես ապրում եմ... Դա իմ ապրելու կերպն է:

- Դուք երեւի շատ ավելի վաղուց եք սկսել Ձեր հայրենասիրական դեգերումները, մեր ազատամարտիկների հետ Ձեր բարեկամությունը՝ Հայաստա-

Բանաստեղծ Գագիկ Դավթյանը 70 տարեկան է

Էջ 5

Ճանապարհին:
Ձեր՝ լեռն ժողովրդի մեծ բարեկամի եւ մեր հրաշալի ընկերոջ 70-ամյա հոբելյանին իմ բարեմաղթանքներն ու երախտագիտությունն են հայտնում՝ լեռնական պոեզիան տարածելու եւ հայ-լեռնական սերտ բարեկամությունը ամուր պահելու համար: Մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, նորամուր բարձունքների նվաճում, իսկ մեզ՝ Գագիկ Դավթյանի ընթերցողներին, գեղեցիկ մտքերի եւ խիղճի ընթերցում:

Էդվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

Հայաստանի գրողների միության նախագահ

Գագիկ Դավթյանը ծնվել է Մյուսինյան դարերի շուշան պահպանող լեռն ու ծորի, հայ հինավուրց նիստ ու կացը կրող մարդկանց միջավայրում եւ իր հոգում ամբարել է լեռնային գետի եւ լեռից լեռ խոսող մարդկանց պաթոս, որը մերթ պոեզիան է բանաստեղծության մեջ, մերթ՝ բարգմանության, մերթ՝ հասարակական ու գրական տարածքներում:

Նկատել եմ՝ միշտ էլ արդարության ու ճշմարտության դիրքն է նրան ծգողը, երեւի դա է պատճառը, որ Գագիկի պոեզիան անհամաձայն է, վագորդի սրտխփոցի ռիթմով, մեկ-մեկ՝ ջղային:

Աշխարհի այսօրվա իրավիճակը թույլ չի տալիս մնալ փետրավոր ամպերին ու թարմ բուրոզ դափնիներին:

Վերջին տասնամյակներին բանաստեղծն առավել ուժգնորեն է բախում տարբեր երկրների բանաստեղծական դոմենն ու ընտիր հայերենով մեզ է մատուցել ու մատուցում է Թագոր, Լիվադիտիս, Պուշկին, Լերմոնտով, Ֆետ, Բլոկ, Լյուբիմա Միլետիչ, հիսունից ավելի եղբայր, երեսունը վրացի: Վերջերս նա եկավ Գրողների միություն եւ ինձ նվիրեց վրացական պոեզիայի հաստատվոր հատորը:

Տարիների անտրտունը աշխատանքի նշանակալից արգասիք:

Կարելի է ասել, որ նա ամբողջ կամրջաշինարար է, պոեզիայի փեր է կապում միմյանց, վերջին մի քանի տարում սերբ, լեռ, բուլղար բանաստեղծները գրանցվեցին մեր թարգմանական մատյանում եւ նաեւ այդ պոետներից ոմանք հայերենից իրենց լեզուներ թարգմանեցին հայ բանաստեղծների: Այո, կամուրջ միակողմանի երթեւեկության համար չէ: Այդ կերպ ենք ճանաչելու ոչ միայն ուրիշների գիրը, այլեւ մեր ստեղծածի արժեքը: Գագիկն այս հավաստամբով է գիշեր ու գոր փնտրում իր եւ այլոց պոետական անհայտ եզերքները: Հաճախ գտնում է ու չի բավարարվում, նորից որոնում, նորից հայտնաբերում:

Կամուրջ նախագծող փորձարկելիս կանգնում է կամրջի տակ, դու վստահ եղիր, Գագիկ, քո կամուրջները ծիածանի յոթ գույների ոյու-թող ու ոգեշնչող թռիչքն ունեն՝ դեպի նոր ամյակներ, 70-ը միջանկյալ հանգրվան է:

ՅԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՄԱՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ



Ռասասենյակների անվանակոչում Շինուհայրում

Էջ 1 մանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, գնդապետ Ջակոբ Ավետյանն ու «Չայրոդիք» հասարակական կազմակերպության նախագահ Նունե Կիրակոսյանը: Այստեղ տեղադրվեց օրինված մոմակալը՝ վառ կրակով: Փառքի սրահն ու անվանակոչված ռասասենյակները ձեռավորված էին հայրենասիրական ոգով ու շնչով: Ձուկված ազատամարտիկների, 33 ազգային հերոսների ու Արցախի հերոսների լուսանկարների շուրջ կանգնած էին պատվո պահակ զինվորները: Ամենուր վառվող մոմեր եւ երախտագիտության ծաղիկներ էին: Դպրոցի սաների կատարմամբ հնչեցին հե-

ղինակային գողտրիկ բանաստեղծություններ, սրտաբուխ խոսքեր: Այնուհետև տեղի ունեցավ անվանակոչված ռասասենյակների բացման արարողությունը: Կարմիր ժապավենի կտրման պատվավոր առաքելությունը ընձեռվեց գնդապետ Մելիքսեթ Պողոսյանին ու ապրիլյան պատերազմում զոհված Արայիկ Սկրտչյանի հնգամյա թոռնիկին՝ Գագիկ Սկրտչյանին, շինուհայր-ցի ճանաչված դերասան, Գորիսի պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Շանթ Յովհաննիսյանին եւ զոհված Արմեն Գասպարյանի որդուն՝ Արթուր Գասպարյանին: Առանձին ցուցափեղկերում ներկա-



դասասենյակները, փառքի սրահն աչքի լույսի պես կպահվեն ու կպահպանվեն, յուրաքանչյուր նշանավոր առիթով դպրոցի սաների մասնակցությամբ կոգելոչվի հայրոցի քաջերի հիշատակը:

Գնդապետ Մելիքսեթ Պողոսյանն իր ելույթում նշեց, որ մնան բարի, հպարտություն պարգևող միջոցառումները, դրանցում ներկայացվող Արցախյան պատերազմն ու մեր ազատամարտիկների սխրագործությունների օրինակներն անփոխարինելի դեր ունեն մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Նա խաղաղ, կապույտ երկինք եւ ստեղծագործ կյանք բարենաղթեց ողջ հայ ժողովրդին: Գնդապետ Մելիքսեթ Պողոսյանը պատվոգրեր հանձնեց համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանին եւ դպրոցի տնօրեն Շիրազ Գրիգորյանին:

Ձուկվածների ծնողներին հանձնվեցին անմահություն խորհրդանշող անմոռուկ ծաղկի պատկերով շքանշաններ:

Տաթև համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանը շնորհակալություն հայտնեց զոհվածների ծնողներին՝ հայրենամարտի զավակներ ծնելու եւ դաստիարակելու համար: Նա ընտանիքներին բարենաղթեց անամա ու երջանիկ ծաղկունք, մանուկների ճիշ, նոր Արայիկների ու Արմենների բախտավոր ծնունդ:

33 վաստակավոր երգչուհի, Աժ պատգամավոր Շուշան Պետրոսյանն ասաց, որ իր համար պատիվ է այսպիսի տոնական օրը գտնվել շինուհայրցիների, այուներցիների կողքին, որովհետև այուներցի լինելն արդեն իսկ մեծ պատիվ է:

- Տասը հերոսի անուն լսեցի, ինչը շատ է մի բուն Շինուհայրի համար: Հայ զինվորին պետք է որ եւ սխրամբից հետո նրան հերոսացնել, Հայաստան աշխարհի զինվոր ու սահմանապահ լինելն արդեն սխրամբ է:

Փառք ու պատիվ շինուհայրցի զոհված



յացված էին 1992 եւ 2016 թվականներին զոհված Արայիկ Սկրտչյանի եւ Արմեն Գասպարյանի կյանքն ու մարտական գործունեությունն ամփոփող թանկ մատուցներ, ռազմի դաշտից՝ անձնական իրեր, ջոկատի ազատամարտիկների հետ լուսանկարներ, ինչպես նաեւ՝ նրանց զինվորական վերնաշապիկները:

Արմեն Գասպարյանի անունով անվանակոչված ռասասենյակի կենտրոնական պատին ամրակցված էր Հարություն Յամբարյանի քանդակած՝ զոհվածի կիսանդրին:

Ձուկվածների զինակից ընկերների, մանկավարժների կողմից հնչեցին ջերմ ելույթներ, դպրոցի սաների սրտառուչ խոսքեր:

Արմեն Գասպարյանի՝ լավ ընկերոջ ու մարդու հիշատակին հուզիչ խոսք ասաց Շանթ Յովհաննիսյանը:

Այնուհետ հանդիսավոր միջոցառումը շարունակվեց դպրոցի դահլիճում:

Կրթօջախի սաները ներկայացրին Արցախյան պատերազմում զոհվածների կենսագրությունն ու անցած մարտական ուղին, առանձին հուշեր, նրանց ծնված բանաստեղծություններ:

Դպրոցի տնօրեն Շիրազ Գրիգորյանն իր խոսքում ասաց. «Մենք այսօր շատ մեծ հպարտություն ենք ապրում, որ Արցախյան եւ ապրիլյան պատերազմներում զոհված Արմեն Գասպարյանի ու Արայիկ Սկրտչյանի անուններով ռասասենյակներ ունենք:

Վստահ եմ, որ մատաղ սերունդը կդաստիարակվի մեր զոհերի հայրենասիրական, ազնիվ եւ համարձակ գործերով, նրանց ոգով, կլինի արժանի, հայրենասեր հետնորդ»:

Նա հավաստիացրեց, որ անվանակոչված

քաջերին, Արցախյան պատերազմի բոլոր սուրբ նահատակներին, ովքեր երկնքից նայում եւ հպարտանում են, որ այսօր մենք ունենք կանոնավոր եւ հզոր բանակ:

Փառք ու պատիվ հայոց բանակին, - ասաց երգչուհին:

Նա մաղթեց, որ շինուհայրցի զոհվածները վերջինը լինեն Շինուհայր գյուղի սրբազան երամից, խաղաղությունն ու երջանկությունն այսուհետ թեւածեն հայ օջախներում, մեր երկրում:

Երգչուհին խոստովանեց, որ իր համար դժվար է խոսել քաջերի մասին, քանի որ ցանկացած խոսք դատարկ ու քիչ է թվում նրանց կատարած սխրագործությունների կողքին:

Երգչուհու համար առավել դժվար է երգելը, բայց նա գտնում է, որ մենք իրավունք չունենք թուլանալ, եւ ինքը պարտավոր է նաեւ երգով ոգեկոչել քաջ շինուհայրցիների հիշատակը:

Շուշան Պետրոսյանի կատարմամբ հնչեց «Արցախի հողում» երգը (խոսքը՝ Ավետ Բարսեղյանի, երաժշտությունը՝ Արման Ղազարյանի): Տոնական միջոցառման ավարտին 33 պաշտպանության նախարարության սպայի տան «Ձորակն» համույթի զինծառայողները հնչեցրին հայրենասիրական երգեր:

Հուզիչ եւ անմոռանալի, իր նշանակությամբ մեծ եւ խորհրդանշական միջոցառումը նախածեռնվել եւ կազմակերպվել էր Շանթ Յովհաննիսյանի, Նունե Կիրակոսյանի, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանի, Տաթև համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանի կողմից:

Փառքի սրահի ու ռասասենյակների ձեռավորման աշխատանքներն իրականացրել էր Շինուհայր գյուղի բնակիչ Ալիկ Ծատրյանը:

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲԱԶՆԱՅԱՆ

Եվրոպայի առաջնությունից՝ երկու ոսկի, երեք բրոնզ

Ուկրաինայի հարկով քաղաքում ապրիլի 28-29-ին տեղի ունեցավ քիթ-բոքսինգի եվրոպայի առաջնությունը: Հայաստանի հավաքականի կազմում մրցմանը մասնակցած Կապանի «Գարեգին Նժդեհ» ակումբի հինգ մարզիկ տուն վերադարձան մեդալներով: ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյանի սաներից երկուսին՝ Արայիկ Ավետիսյանին և Նոյ Անտոնյանին հաջողվեց հաղթող ճանաչվել, նրանց պատվին հնչեց Հայաստանի պետական օրհներգը, բարձրացվեց հայոց եռագույնը, ընդ որում՝ Նոյը եզրափակչում ուկրաինացի հակառակորդին նոկաուտի ենթարկեց: Ակումբի եւս երեք մարզիկ՝ Վաչե Գյուլբուդադյանը, Դավիթ Բաբախանյանը, Էրիկ Մարտիրոսյանը բարձրացան պատվով պատվանդանի երրորդ հարթակ՝ արժանանալով բրոնզե մեդալի:

Ինչպես փոխանցեց ակումբի նախագահ Ա.Սարգսյանը, Էրիկ Մար-



տիրոսյանն էլ էր հաղթողի հավակնորդներից, բայց լուրջ վնասվածք ստացավ (ծեռքը ջարդվեց) և չկարողացավ հանդես գալ եզրափակչում: Այս մրցմանը հնարավոր եղավ մասնակցել Սյունիքի մարզի զարգացման և երեքուկես րոպեի հիմնադրամի հատկացրած միջոցների շնորհիվ:

Կապանցի քիթ-բոքսիստներին առաջիկայում նոր, ավելի ծանր փորձություն է սպասվում, Հունաստանի մայրաքաղաք Աթենքում մայիսի 31-ից հունիսի 3-ը կայանալու է մրցածեի աշխարհի առաջնությունը, մարզիչն ու սաները հույս ունեն, որ այդ կարեւոր ստուգատեսին եւս իրենց նեցուկ կլինեն մասնակցության խնդրում, մանավանդ 2008 թվականից ի վեր աշխարհի առաջնության չեն մասնակցել, եւ յուրաքանչյուր մեդալ մեծ նվաճում կհամարվի:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Բաց պարապմունք «Ֆիզկուլտուրա» առարկայից



Գարոցական միջոցառումներ ասելիս սովորաբար առաջին հայացքից պատկերացնում ենք գրական-երաժշտական համադրույթներ, բայց Սյունիքի միջնակարգ դպրոցում ապրիլի 28-ին «Ֆիզկուլտուրա» առարկայից կազմակերպված բաց պարապմունքը, կարծեք, այդ կարծրատիպը կտորեց:

Ինչպես նշեց դպրոցի տնօրեն Լիլիթ Առաքելյանը, այսօր կրթության բնագավառում իրականացվող փոփոխությունները ոչ միայն առնչվում են բնագիտական, տեխնիկական, հումանիտար առարկաներից գիտելիքների ուսուցման գործի կատարելագործմանը, այլև ֆիզկուլտուրային, երեխաների առողջ պարելակերպին: «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության տրամադրած մոտ 600 հազար դրամ արժողությամբ դպրոցի համար ձեռք բերված մարզական գույքով բաց պարապմունքի ընթացքում աշակերտները ցույց տվեցին իրենց կարողություններն ու հմտությունները, կարճ ժամանակահատվածում սովորած վարժությունները, որոնց կատարումներն ընդմիջվում էին երկրորդ դասարանի աշակերտուհի Իննեսայի ցուցադրած գեղարվեստական մարմնամարզության համարներով:

Միջոցառմանը ներկա էին նաև «Կապանի ԼՅԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի Դմիտրի Ուշկովը, գլխավոր տնօրենի տեղակալ Վահրան Ավագյանը, հասարակայնության հետ կապերի և սոցիալական քաղաքականության բաժնի պետ Գայանե Թադևոսյանը: Ընկերության գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովը նախ շնորհակալություն հայտնեց իրավերի, աշակերտների ցուցադրական վարժությունների համար, այնուհետև նշեց. «Անգնե աչքով անգամ կարելի է տեսնել մարզադասի ի՞նչ ունակ խնդիրները, որոնք պետք է վերագ-

նել միգրացիոն անմիջապես, բայց աստիճանաբար: Հնարավորության սահմաններում մենք նույնպես մատաղ սերնդի հատկապես առողջ պարելակերպի զարգացման, դպրոցում առկա խնդիրների լուծման գործում»:

Ուսուցչի օրինակը տեսական գիտելիքներ մատուցելուց առավել արդյունավետ է, ուստի հատկապես տպավորիչ էին դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Նորայր Սահակյանի՝ ակրոբատիկայից ցուցադրած վարժությունները: Նա նույնպես շնորհակալություն հայտնեց կոմբինատի տնօրեն Դմիտրի Ուշկովին՝ ցուցաբերած աջակցության, իսկ դպրոցի տնօրենին՝ հետևողականության համար:

«Առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսով առաջնորդվելու դեպքում կունենանք առողջ հասարակություն, ուստի դասի նպատակն էր ցույց տալ դպրոցում ֆիզկուլտուրան բարձր մակարդակի հասցնելու ամիրածեղությունը: Համոզված են՝ ձեռք բերված մարզագույքի առկայության պարագայում ուսուցչին ավելի մեծ հնարավորություններ ենք տալիս՝ երեխաների ֆիզիկական պատրաստվածությունը կատարելագործելու, բացթողնումները լրացնել համար»,- նշեց Լիլիթ Առաքելյանը, ով իրենց խնդրանքին ընդառաջ գնալու համար շնորհակալություն հայտնեց կոմբինատի տնօրենությանը՝ համազունք հայտնելով, որ հետագայում իրենց համագործակցությունը շարունակական բնույթ կունենա:

Նշենք նաև, որ մինչ միջոցառումը դիտելը Դմիտրի Ուշկովը ծանոթացավ դպրոցի պայմաններին, առկա խնդիրներին, որոնք հիմնականում առնչվում են համապատասխան գույքի ձեռքբերմանն ու շինության վերանորոգմանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՈՒԽՏԵՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԴՄՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2017/18 ՈՒՍԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները		Ընդունելության տեղ / այդ թվում			Ընդամենը ընդունվածները
	մրցութային	Ոչ մրցութային	Առողջարան	այդ թվում		
				բզ.	նպտ.	
ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ			14	1	71	
1 Տնտեսագիտություն	Մ(գ)	Ֆ(գ)**	Հլ(գ)*	3	22	450
2 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**	Հլ(գ)*	4	21	450
3 Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**	Հլ(գ)*	4	16	390
4 Մետալուրգիա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**	Հլ(գ)*	3	12	390

- 1. Բուհում ընդունելության դիմում-հայտի լրացման և փաստաթղթերի ներկայացման ժամկետները**
- ա) Մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը (մինչև ժամը 18:00) ընկած ժամանակահատվածում իրենց փաստաթղթերն են բուհի ներկայացնում և բուհում ընդունելության դիմում-հայտ լրացնում՝
 - հանրակրթական ուսումնական հաստատությունների այս տարվա շրջանավարտները,
 - հանրակրթական ուսումնական հաստատությունների նախորդ տարվա (տարիների) շրջանավարտները,
 - նախորդ տարի գորագրված դիմորդները:
 - բ) Հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը (մինչև ժամը 18:00) ընկած ժամանակահատվածում իրենց փաստաթղթերն են բուհի ներկայացնում և բուհում ընդունելության դիմում-հայտ լրացնում՝
 - ՀՀ երկրաչափի դիմորդները,
 - այլ պետության քաղաքացիություն ունեցող դիմորդները,
 - օտարերկրյա ուսումնական հաստատությունները այս ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացի դիմորդները,
 - սույն թվի գարնանային գորագրումից գորագրված դիմորդները,
 - նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների այս տարվա շրջանավարտները:

- 2. Դիմորդների կողմից դիմում-հայտի հետ միասին ներկայացվող փաստաթղթերը՝**
- լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից(նախորդ տարիների շրջան-

- նավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ),
- ճյուղավար (3x4 չափսի),
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստական վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կայության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում ՀՀ ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ,
- փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաթշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),
- զինվորական գրքույկ և զինվորական կոմսարիատի տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցած լինելու, ծառայության վայրի և ծառայողական բնութագրի մասին:
- փաստաթղթերի ընդունման և ձեռնարկման համար 1500 դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

Ամիրածեղ տեղեկատվություն կարող եք ստանալ նաև կայքի <<ԴԻՄՈՐԴ>> բաժնից կամ դիմել ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ՝ Բաղաբերդ 28: Հեռախոս՝ 5-46-80, 5-34-61, 093-15-00-26:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԾՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Վաճառվում է Կապանի Աշտովան քաղաքի N45 առանձնատունը: Այն երկհարկանի է, վերանորոգված: Առանձնատունն ունի տնամերձ հողատարածք: Մանրամասների համար զանգահարել 077422518 հեռախոսահամարով:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԴԱՐԱՐԱԿՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԽԱՐԿ» ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ԴՈՒՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԻ

Գլխավոր խմբագիր՝ **ՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
 Դեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
 Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

«ԳՈՎԱԶԳԻ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

© ճանաչողական տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայական՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1730, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.05.2017թ.:

Թերթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):